ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «19» 01. 2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց հրատապ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ, Ա/Ձ Հրահատ Օհանյան, «Սարգսյաններ» ՍՊԸ, «Էջմիածնի հաց» ԲԲԸ, «Հրանտ Կարապետյան» ՍՊԸ, «ՀԱԳ-ԳԱՀ» ՍՊԸ, «Արամ Եգանյան և ընկերներ» ՍՊԸ և «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ: «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ կողմից ներկայացված Հավելված 5 և Հավելված 5.1 բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները, ինչպես նաև ներկայացրած պայմանագիրը չի համարվում նմանատիպ, քանի որ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Բացակայում են պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները: Ա/Ձ Հրահատ Օհանյան և «Սարգսյաններ» ՍՊԸ կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են Հավելված 5 և Հավելված 5.1: «Էջմիածնի հաց» ԲԲԸ, «Հրանտ Կարապետյան» ՍՊԸ, «ՀԱԳ-ԳԱՀ» ՍՊԸ, «Արամ Եգանյան և ընկերներ» ՍՊԸ կողմից չեն ներկայացվել հրավերով նախատեսված փոխադրամիջոցների սանիտարական անձնագրերի պատճենները: «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ կողմից ներկայացված փաստաթղթերում Հավելված 5 և Հավելված 5.1 բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները, բացակայում է հրավերով նախատեսված փոխադրամիջոցի սանիտարական անձնագրի պատճենը, ներկայացրած պայմանագրի հաշիվ ապրանքագրերը թերի են և չեն համապատասխանում ներկայացրած պայմանագրի գումարին: «Հրանտ Կարապետյան» ՍՊԸ սահմանված ժամկետում ներկայացրել է նաև բանկային երաշխիքի բնօրինակը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 23.01.2018թ. ծանուցել վերոնշյալ մասնակիցներին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները, բացառությամբ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ, որը շտկումները թերի է կատարել՝ չի ներկայացրել նմանատիպ պայմանագիրը, հաշիվ ապրանքագրերը և այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ հայտը մերժվել է և նիստը շարունակվել է:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, որը ներկայացվել է 19.01.2018թ. մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «Էջմիածնի հաց» ԲԲԸ՝ 114 324 ՀՀ դրամ, «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ՝ 77 604 ՀՀ դրամ, «Յուրգաս» ՍՊԸ՝ 2 583 ՀՀ դրամ և «Սարգսյաններ» ՍՊԸ՝ 35 900 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով վերոնշյալ եզրակացությունը գնահատող հանձնաժողովը «Էջմիածնի հաց» ԲԲԸ և «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ հայտերը մերժեց: «Յուրգաս» ՍՊԸ և «Սարգսյաններ» ՍՊԸ հարկային պարտավորությունները չեն գերազանցում գնային առաջարկների մեկ տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից համարվել են համապատասխան: Իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, բացառությամբ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ, որտեղ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային

առաջարկից: Ոչսրի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 23.01.2018թ. ծանուցել վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից «ՍՖՍ ԱԻԽՈ» ՍՊԸ հայտը մերժվել է:

Հաշվի առնելով, որ «ՍՖՍ ԱԻԽՈ» ՍՊԸ և «Էջմիածնի հաց» ԲԲԸ հայտերը մերժվել են գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին և 7-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄՇՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն '"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

1.2 26.01.2018թ. նիստին, քանի որ «Զանգեզուրի Հասկ» ՍՊԸ հայտը մերժվել է 2-րդ չափաբաժնով գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Կապանի հաց» ՍՊԸ: Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄՇՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄՇՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան

26.01.2018թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «07» 02. 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակցի՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց հրատապ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Մասնակցի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, որը ներկայացվել է 31.01.2018թ. մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, սակայն հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը : Ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 07.02.2018թ. ծանուցել «Կապանի հաց» ՍՊԸ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 14 բաժնի պետի 07.02.2018թ. գրությունը, համաձայն որի «Կապանի հաց» ՍՊԸ ակտիվները կազմում են 13 449 960 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 12 734 044 ՀՀ դրամ, որը գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է համապատասխան:

1.2 09.02.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄՃՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող	Վ. Գասպարյան
Գնահատող	Ա. Մարգարյան
Գնահատող	Տ. Հարոյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Գ. Տերյան